ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 15.06.2026թ.
Ժամը 10^{15}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության պետի տեղակալ-գլխավոր ինժեներ, գնդապետ՝ Ա. Բախշիյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՋՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ՝ Ա. Ասատրյան,
ՀՀ ՋՈՒ ԳՇ կապի և ԱԿՀ վարչության ԿՋՏԱ բաժնի ավագ սպա՝ Խ. Երիցյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պողոսյան:

«ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Պողոսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով ԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով ԲՄ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Պողոսյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/h	Մասնակցի անվանում
1	«Տենդեր Գրուպ» ՍՊԸ
2	«Արագած» ՍՊԸ
3	«Գիպար» ՍՊԸ
4	«ՍԱՏԱՐ2021» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով ԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Պողոսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների՝ էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) բացառությամբ «ՍԱՏԱՐ2021» ՍՊԸ-ի, մասնավորապես՝

«ՍԱՏԱՐ2021» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 2-ը՝ ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները, ներկայացված են «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով կազմակերպված ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան՝ «ՍԱՏԱՐ2021» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի բոլոր չափաբաժիններին հայտով ներկայացված գնային առաջարկներում սխալ է ներկայացված արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչների հաշվարկը: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և սույն հրավերի 8.2 կետի՝ բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Պողոսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները (մասնակիցը).

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Հ/Մ	Քանակը	գնման ընդհանուր գինը 15.6.1	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների անվանումները	գնային առաջարկները առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	հրամանատարական մեքենաների կահավորման ծառայություններ (ՀՇՄ կահավորում)	դրամ	1	---	«Տենդեր Գրուպ» ՍՊԸ	186 048 000	37 209 600	223 257 600
					«Արագած» ՍՊԸ	155 154 000	31 030 800	186 184 800
					«Գիպար» ՍՊԸ	53 830 000	10 766 000	64 596 000
					«ՍԱՏԱՐ2021» ՍՊԸ	*89 528 000*	*22 382 000*	*111 910 000*
2	հրամանատարական մեքենաների կահավորման ծառայություններ (հրամանատարական կետերի կահավորման ծառայություններ)	դրամ	1	---	«Տենդեր Գրուպ» ՍՊԸ	186 660 000	37 332 000	223 992 000
					«Արագած» ՍՊԸ	163 320 000	32 664 000	195984 000
					«Գիպար» ՍՊԸ	56 650 000	11 330 000	67 980 000
					«ՍԱՏԱՐ2021» ՍՊԸ	*94 240 000*	*23 560 000*	*117 800 000*
3	հրամանատարական մեքենաների կահավորման ծառայություններ (ՀՇՄ կահավորում)	դրամ	1	---	«Տենդեր Գրուպ» ՍՊԸ	186 048 000	37 209 600	223 257 600
					«Արագած» ՍՊԸ	155 154 000	31 030 800	186 184 800
					«Գիպար» ՍՊԸ	53 830 000	10 766 000	64 596 000
					«ՍԱՏԱՐ2021» ՍՊԸ	*98 648 000*	*24 662 000*	*123 310 000*

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/ բացառությամբ «ՍԱՏԱՐ2021» ՍՊԸ-ի, մասնավորապես՝ «ՍԱՏԱՐ2021» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի բոլոր չափաբաժիններին հայտով ներկայացված գնային առաջարկներում սխալ է ներկայացված արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչների հաշվարկը, որի արդյունքում սխալ է հաշվարկված նաև ընդհանուր գինը: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի և «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 5.2 կետի՝ Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և սույն հրավերի 8.2 կետը՝ բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-2/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ՍԱՏԱՐ2021» ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

3.3 «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն կազմակերպվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով ԲՄ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Գ. Պողոսյան)

4.1 16.06.2026թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչվեց «Գիպար» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Պողոսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԾՁԲ-26-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ա. Բախշիյան
Գնահատող	Ա. Ասատրյան
Գնահատող	Խ. Երիցյան
Գնումները համակարգող՝	Գ. Պողոսյան